ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 28.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/36

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 24.08.2017թ. թիվ 03/26-3/15474-17 գրությամբ «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00087998) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 21.08.2017թ. թիվ ԴՎԱ/2780 գրության հիման վրա, 24.08.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 21.08.2017թ. թիվ ԴՎԱ/2780 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ին ծանուցվել է ներկայացնելու ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմկերպման կարգի» 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, սակայն սահմանված ժամկետում մասնակցի կողմից վերը նշված փաստաթղթերը չեն ներկայացվել:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը որոշեց 2-րդ չափաբաժնի մասով մերժել «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի հայտը»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Արման Բաղրամյանը:

3. **<u>«ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ընկերությունը Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ ս.թ. օգոստոսի 22-ին «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին է ներկայացրել նշված գործընթացի հետ կապված դիմում-բողոք, որը գտնվում է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ Մ.Անանյանի քննության ներքո:

Միաժամանակ հայտնում ենք, որ «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին ուղարկված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացվել, քանի որ ծանուցման մեջ տեղի է ունեցել վրիպում, մասնավորապես, նշված է եղել, որ «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ն 1-ին

չափաբաժնի մասով է ճանաչվել հաղթող, իսկ 2-րդ չափաբաժնի մասով հաղթող է ճանաչվել «Պիպաս ֆուդ» ընկերությունը, սակայն իրականում Ընկերությունը հաղթող է ճանաչվել Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով»:

Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչ Լուսինե Վարդանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/36 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 24.08.2017թ. թիվ 03/26-3/15474-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 21.08.2017թ. թիվ ԴՎԱ/2780 գրությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 27.07.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3, 27.07.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 4, և 14.08.2017թ. ժամը 12:30-ին կայացած նիստի N 5 արձանագրությունները, «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի պատճենը, «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի 22.08.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքը և Խորհրդի կողմից 05.09.2017թ. նույն բողոքի վերաբերյալ կայացված ԳԲԽ-ԱՄ-2017/29 որոշումը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ է ներկայացրել «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնի մասով:

Հանձնաժողովը՝

- 04.08.2017թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության 4.1 կետով որոշել է 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ին:
- նույն արձանագրության 4.2 կետով որոշել է առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման

չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը՝ նույն օրը ծանուցելով այդ մասին Ընկերությանը:

• 14.08.2017թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ընթացակարգի հրավերով նախատեսված փաստթղթերը չեն ներկայացվել, ուստի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշել է մերժել 2-րդ չափաբաժնով «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի հայտը:

Խորհուրդը՝ քննելով «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի կողմից 22.08.2017թ. ներկայացված բողոքը, 05.09.2017թ. ԳԲԽ-ԱՄ-2017/29 որոշմամբ բավարարել է այն և դադարեցրել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.08.2017թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված՝ «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Խորհրդի ԳԲԽ-ԱՄ-2017/29 որոշմամբ մասնավորապես արձանագրվել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «Էլեկտրական պարամետրերի չափման գործիքների», «Գովազդային նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «armeps» համակարգի միջոցով հայտ է ներկայացրել «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնի մասով:

«ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրել է Հավելված 1-ը՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումը, որով Ընկերությունը հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցելու ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 2-րդ չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2017թ. նիստի թիվ 4 արձանագրության 4.1 ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատման արդյունքում «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, իսկ «Պիպաս ֆուդ» ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնով:

Պատվիրատուն 04.08.2017թ. ծանուցմամբ «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ին հայտնել է, որ Ընթացակարգի գնահատման արդյունքում վերջինս Ընթացակարգի 1-ին չափաբաժնով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և հրավերով սահմանված կարգով և ժամկետում առաջարկել է Պատվիրատուի էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.08.2017թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 ենթակետով կայացված որոշմամբ՝ հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, 2-րդ չափաբաժնով մերժել է «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի հայտն այն պատճառաբանմամբ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կարգի 43-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած

մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 1-ին կետի 1.1 ենթակետով սահմանվել է, որ գնման առարկա է հանդիսանում ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «Էլեկտրական պարամետրերի չափման գործիքների», «Գովազդային նյութերի» ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են «2» չափաբաժնում:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4-րդ կետի 4.1 ենթակետի համաձայն՝ նույն ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով հանձնաժողովին ներկայացնում է հայտ: Հայտը նույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար (եթե ընթացակարգն իրականացվում է մեկ չափաբաժնով, ապա մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ամբողջ չափաբաժնի համար):

«ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրել է Հավելված 1-ը՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումը, որով Ընկերությունը հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցելու ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 2-րդ չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2017թ. նիստի թիվ 4 արձանագրության 4.1 ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատման արդյունքում «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ն 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել 1-ին չափաբաժնով, իսկ «Պիպաս ֆուդ» ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնով:

Նույն արձանագրության 4.2 ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Պատվիրատուն 04.08.2017թ. ծանուցմամբ «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ին հայտնել է, որ Ընթացակարգի գնահատման արդյունքում վերջինս Ընթացակարգի 1-ին չափաբաժնով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և որ Ընկերությունը պարտավորվում է հրավերով սահմանված կարգով և ժամկետում Պատվիրատուի էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.08.2017թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 ենթակետով կայացված որոշմամբ՝ հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, 2-րդ չափաբաժնով մերժել է «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ի հայտը, այն պատճառաբանմամբ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուն չի պահպանել գնումների մասին ՀՀ օրենսդրության, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և Կարգի 43-րդ կետի պահանջները, այն է՝ Ընկերությանը 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել և ծանուցել է, որպեսզի վերջինս ներկայացնի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, այնինչ՝ Ընկերությունը մասնակցության հայտ է ներկայացրել միայն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

Ուստի նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն՝ մերժելով Ընկերության հայտը, գործել է ոչ իրավաչափ»:

ՍՑ-ԷՍ-2017/36 պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ Ընկերության կողմից 22.08.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքում նշված և Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի կողմից ներկայացված փաստական հանգամանքների՝ մասնավորապես, Հանձնաժողովի արձանագրություններում և Ընկերությանն ուղարկված պաշտոնական

ծանուցման մեջ նշված չափաբաժնի համարի անհամապատասխանությունը տեխնիկական վրիպակի արդյունք է, որն, ըստ Պատվիրատուի ներկայացուցչի, «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերում վերջինիս կողմից շտկվել է:

Հաշվի առնելով Պատվիրատուի կողմից ներկայացված փաստարկները՝ Խորհուրդն առաջարկեց վերջինիս համապատասխան գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը առանց քննության թողնելու առաջարկով, սակայն մինչ օրս Խորհուրդը ՀՀ ֆինանսների նախարարությունից նման դիրքորոշում չի ստացել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուն Ընկերությանը ճանաչել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից և առաջարկել վերջինիս ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, մինչդեռ Ընկերության կողմից մասնակցության հայտ է ներկայացվել Ընթացակարգի միայն 2-րդ չափաբաժնի մասով:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն՝ մերժելով Ընկերության հայտը, գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.08.2017թ. թիվ 03/26-3/15474-17 գրությամբ «ԷրԿա Սթայլ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00087998) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**